ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ 1948, № 9 Общественные науки

Ռ. Զարյան

ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՀԱՅՏ ՇՐՋԱԳԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

(Աբովյանի ճանապարհորդությունը 1838-ին)

Աբովյանը, ինչպես հայտնի է, շատ է շրջագայել։ Շրջագայությունները սկսվել են նրա պատանեկական հասակից և շարունակվել, ինչպես այժմ պարզվում է, գրեթե մինչև կյանքի վերջին տարիները։[1] Հաքստհաուզենը, Նոխը, Վագները, Մուրավյովը, Բոդենշտեդը և Պարրոտը, որոնց հետ հանապարհորդել է Աբովյանը, ճիշտ է, տարբեր չափով, բայց գրել են իրենց ուղևորության մասին, հիշել Աբովյանին, պատմել որոշ մանրամասնություններ, որոնք Աբովյանի կյանքի այդ շրջանների վրա լույս են սփռում։ Մանրամասնություններ չկային Աբիխի հետ կատարած ուղևորության մասին։ Վերջերս մի որոշ պարզություն մտավ նաև այդ հարցի մեջ Գրականության Ինստիտուտում Բել-Մամիկոնյանի կարդացած զեկուցման շնորհիվ։[2]

Աբովյանի կյանքի, համեմատաբար, ավելի մանրամասն ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ արդեն հայտնի շրջագայություններից բացի, կան և ուրիշները, որ նրա են, բոլորովին անհայտ մեր գրականության մեջ։

*

Աբովյանի թղթերի մեջ պահպանվել է մի հետաքրքիր փաստաթուղթ, որը ոչ միայն չի հրապարակված մինչև հիմա, այլև նրա մեջ եղած տվյալները չեն օգտագործված Աբովյանի մասին գրող բանասերների կողմից։[3]

Այս փաստաթուղթն ամբողջապես նվիրված է Աբովյանի կատարած մի ճանապարհորդությանը։ Դա ոչ այլ ինչ է, բայց եթե ուղեգրություն, որին, սակայն, Աբովյանը նամակի ձև է տվել։

Նամակը գրել չ, ավելի ստույգ, սկսել է գրել Էջմիածնում, Թիֆլիս, աշակերտներին ուղարկելու համար։ Այդպես ենք ասում, որովհետև նամակը թվագրված է այսպես. «Ի 25 մայիսի 1838 ամին, յէջմիածին»։ Բացի դրանից, առաջին իսկ էջերում Աբովյանը պատմում է, թե ե՛րբ, ո՛րտեղ և ի՛նչու է գրել այս նամակը։

«Հեռի ի ձէնջ 300 վերստ, նստեալ ի փոքր խցի միում Էջմիածնի, փակեալ չորեքկուսի ի գիշերային մթոյ. ամենեքեան հանգստանան, ո՛չ ի՛նչ ձայն,

[1] Նկատի ունենք գրականության մեջ դեռ անհայտ մի շրջագայություն, որ կատարել է Աբովյանը 1847 թ. աշնանը։

[2] Դժբախտաբար մեզ չվիճակվեց Բել-Մամիկոնյանի զեկուցումը լսել. նրա մասին գաղափար ունենք մամուլում տպագրված սեղմ հաղորդումից («Սովետական գրականություն», 1943, № 4-5)։

[3] ՀՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Մ. Աբեղյանի անվան Գրականության Ինստիտուտի Գրական թանգարան. Խ. Աբովյանի արխիվ, № 20։ Մեծադիր էջերով մատյան, որի տիտղոսաթերթին գրված է. «Առ բարեկամունս և սիրելի աշակերտս իմ Ներսիսյանական ուսումնարանին Տփխիսոյ։ Ի 25-ն մայիսի, 1838 ամին, յէջմիածին»։ Առաջին էջում այս խորագիրը կրկնվում է, ուր գրված, բայց հետո ջնջված են «Ներսիսյանական ուսումնարանին Տփխիսոյ» բառերը։

ո չինչ շունչ խավանէ զմիայնութիւն իմ. եթէ ոչ արագաշարժ պտոյտ փոքր շարխի միոյ որ շինեալ կայ առաջի բնակարանի իմոյ։ Նստիմ աստ միայն և միտք իմ վերասլանան առ ձեզ։ Կարոտիմ տեսանել զձեզ. բայց ա՜խ՝ լերինք ահագինք և հեռաւորութիւն անհուն անկանին ի մէջ մեր։ Ահա այս է պատճառն՝ զի գրեմ ձեզ զթուղթս զայս, մասամբ փութք յայտնել ձեզ զսիրտ իմ և մասամբ պատմել ձեզ զճանապարհորդութիւն իմ»։

Բայց դրա հետ միասին, նամակում նկարագրված է ոչ միայն էջմիածնում անցկացրած կյանքը, այլև այն ուղևորությունը, որ հաջորդել է դրան, ինչպես և վերադարձի ճանապարհը, Թիֆլիս հասնելը, աշակերտներին հանդիպելը։ Ըստ որում նամակը վերջանում է այսպիսի տողերով. «Յերկրորդում աւուր ի տասն ժամու գիշերին կրկին դարձ արարաք ի տեղի ելից մերոցն՝ այն է ի Տփխիս, ուր միւս անգամ սփոփեցայ խնդալից տեսութեամբ ձերով ընկե՛րք սիրելիք. և թէ զիա՞ր քաղցը էր մեզ կրկնակի տեսութիւն յետ այնքան հեռավորութեան, դուք ինքնին վկայէք, պահեսցուք ուրեմն զայս սէր մաքուր զի ուր և իցեմք. հոգի մեր և սիրտք՝ միշտ անսասան մնասցէ յայսմ նախանձելի բարեկամութենէ՝ որում չի՛ք սահման հեռաւոր»։

Պարզ է, որ Աբովյանը չէր կարող էջմիածնում գրել այն, ինչ հետո է տեղի ունեցել։

Կարելի է այսպիսի ենթադրություն անել. էջմիածնում առաջին երկուերեք էջերն է գրել միայն, կամ էլ էջմիածնում գրած լինելը ընդհանրապես լոկ մի գրական հնար է, հեռավորությունից գրված լինելու պատրանք առաջ բերելու համար, իսկ պարզապես գրված է Թիֆլիսում։ Այս ենթադրության համար հիմք է ծառայում առաջին իսկ էջերում հանդիպած հետևյալ տողը. «Աստի սկսեալ մինչև ցվերադառնալը մեր ի Թիֆլիս՝ համարեա թէ իբրև զմի ընտանիս էաս»։

Բայց կա բավական հաստատուն հիմք և այլ ենթադրության համար։ Մինչև 11 էջը գրված է մնացածից տարբեր թանաքով, 12-րդ էջում թանաքը փոխվում է, իսկ կես էջից և ամբողջ շարունակությունը, բացառությամբ եզրափակող տողից, որ գրված է բոլորովին այլ ձեռագրով։ Ճիշտ է, Աբովյանի ձեռագիրը միաձև չէ, երբեմն նույնիսկ շատ է տարբեր մեկը մյուսից. նայած ե՞րբ է գրել, ո՞ր տարիքին, ի՞նչ տրամադրությամբ և այլն։ Բայց ո՞ւմ ձեռագիրն է շարունակությունը— Աբովյանի՞նն է, թե մեկ ուրիշինը։ Մեզ թվում է, համենայն դեպս ոչ Աբովյանինը։ Եվ այդ ուրիշը, ամենայն հավանականությամբ, նրա ընդունակ աշակերտներից է, որին իր սեագիրը տվել է մաքրագրելու նպատակով. նախ՝ այդ ուրիշի գրածի մեջ ուղղումներ կան և այդ ուղղումների ձեռագիրն լապես տարբերվում է արտագրողի ձեռագրից։ Ոչ մի կասկած չի կարող լինել, որ այդ ուղղումները պատկանում են Աբովյանին։

Սակայն կա ավելի հավանական հիմք։ Այս ուղեգրության մեջ Աբովյանը մի տեղ հիշում է, որ շատ տարիներ առաջ այս վայրերում եղել է Պարրոտի հետ։ Ձեռագրում դրան նվիրված նախադասությունը վերջանում է այսպես՝ «հռչակաւոր պրոֆեսսորն» և սրա շարունակությունը տողավերջում, այսինքն՝ պրոֆեսորի անունը մի երկու բառի չափով բաց է թողնված, իսկ մյուս տողի սկզբից արտագրությունը շարունակված է։ Եվ հետո, արդեն անկասկած Աբովյանի ձեռքով, բաց թողնված տեղում կատարված է անհրաժեշտ լրացում, այսինքն գրված է Պարրոտի անունը։ Իհարկե, արագ գրելիս, սեագրության պահին, Աբովյանը կարող էր բառ բաց թողնել և ապա վերակարդալիս՝ այդ

բացթողումը լրացնել։ Բայց նախ՝ սա մաքրագիր է, արտագրված մի ուրիշ, արդեն դոյություն ունեցող ձեռագրից։ Երկրորդ՝ ոչ թե բառը մոռացվել է և այդպիսով դուրս մնացել, այլ պարզապես չի գրվել։ Իսկ այդ պատահում է այն ժամանակ, երբ գրելիս չես հիշում համապատասխան բառը և գիտակցաբար տեղ ես թողնում՝ հետագայում լրացնելու համար։ Բոլոր դեպքերում չի կարելի մտածել, որ Աբովյանն այս ուղեգրությունը շարադրելիս չի հիշել և մոռացած է եղել Պարրոտի անունը։ Պարրոտի անունը Աբովյանի սնագրության մեջ եղել է, բայց ըստ երևույթին, այնպես գրված, որ արտագրողը չի կարողացել կարդալ և բաց է թողել։ Նույնը պետք է ասենք նաև վերջին եզրափակող տողի մասին։ Ահա և մի ուրիշ հիմք՝ արտագրության մեջ կան ուղղումներ։ Ուղղումները, ինչպես ասացինք, պատկանում են Աբովյանին։ Ինչ խոսք, որ նորից կարդալով, նա տեղ-տեղ ջնջել է կամ մի բառ փոխարինել մի ուրիշով։ Ասել է թե՝ իր գրածը մշակել է։ Բայց ահա մի տեղ արտագրողը դրել է «կրօնաւորացն», Աբովյանը դարձրել է «կալանաւորացն»։ Սա մշակման արդյունք չէ, այլ ուրիշի թույլ տված սխալի ուղղումն։ Պարզապես արտագրող աշակերտը Աբովյանի գրած բառը ճիշտ չի կարդացել։ Երևի Աբովյանի ձեռագրի մեջ էլ այդ բառը, ինչպես և Պարրոտի անունը, գրված է եղել բավական անընթեռնելի։

Նշանակում է սա ոչ թե նամակ է սովորական իմաստով, այլ գրական երկ, որին սակայն, Աբովյանը գիտակցաբար տվել է նամակի բնույթ։

Այդ ապացուցվում է նաև նրանով, որ գրվածքը նախ շատ մեծ է, իր ծավալով նամակի սահմաններից դուրս եկող և ապա բաժանված գլուխների, որոնք խորագրված են, ինչպես օրինակ՝ «Դաշտն Կօդայի», «Շուլաւեր», «Լօռի», «Փամբակ», «Անի», «Սարդարաբադ», «Արմաւիր», «Էջմիածին և բնակութիւն մեր անգ», «Վերադարձումն բարոնին», «Օրհնութիւն սրբալոյս մեռոնի», «Ելն մեր յէջմիածինէ» և «Երևան»։

Ի միջի այլոց նկատենք, որ այն ժամանակվա ռուսական և եվրոպական արձակագրության մեջ նամականին ընդունված ձևերից մեկն է եղել։

* * *

Ի՞նչ է պարզվում այս ուղեգրությունից։

1838-ի գարնանը Աբովյանը շրջագայության մեջ է եղել։

Ներքին խորհրդական, բարոն և սենատոր Գանը, որը, ինչպես այլ փաստաթղթերից է հայտնի, բարյացակամ է տրամադրված եղել դեպի Աբովյանը,[1] խնդրում է վերջինիս՝ իրեն և կնոջը ուղեկցել Հայաստան։ Աբովյանը տալիս է համաձայնություն։

Թիֆլիսից դուրս գալով, անցել են Թելեթ, այնտեղից Շուլավեր, ապա Լոռի։ Հասնում են Ալեքսանդրոպոլ, ապա այցելում Անին։ Սարդարաբադի և Արամվիրի վրայով գալիս հասնում են Էջմիածին։ Գանը ճանապարհվում է

[1] «Դիվան Խաչատուր Աբովյանի», էջ 61։ Գանը Նիկոլայ I-ին կողմից ուղարկված էր ուսումնասիրելու Անդրկովկասը, վերջինիս վարչական վերակառուցման նախագիծ կազմելու համար։

Կոխպի աղաձանքերը, իսկ նրա կինը Աբովյանի հետ՝ Էջմիածին։ Գանի վերադարձից հետո ճանապարհվում են Երևան, այնտեղից Քանաքեռ, Դարաչիչակ, Գյոքչա, Դիլիջան և ապա ուղիղ Թիֆլիս։ Թե որքան է տևել շրջագայությունը, ստույգ հայտնի չէ. գիտենք սակայն, որ մայիսի 15-ին արդեն Էջմիածնում են եղել, իսկ հունիսի 2-ին Երևանից դուրս են եկել, շրջագայելով Թիֆլիս վերադառնալու համար։

Ամբողջ շրջագայության ընթացքում Աբովյանը լավ տրամադրության մեջ է եղել, նույնիսկ անչափ ուրախ այս առիթին։ Աբովյանը գտնում է, որ ամեն ժամանակ էլ ճանապարհորդություն կատարելը մի հաճելի բան է մարդու համար։ Բայց, ասում է նա, այս շրջագայությունը չմոռանալու համար ինքը մի քանի պատճառ ունի։ Նա մատնանշում է միայն երեքը. նախ՝ ժամանակը։ Բոլոր դաշտերն ու ձորերը, ինչպես Աբովյանն է ասում, կրկին կենդանացած՝ ցնծալից են եղել։ Երկրորդ՝ ճանապարհի ընկերները եղել մարդիկ, պարզ և քաղցրագրույց։ Երրորդ, որ Աբովյանի ասելով ամենակարևորն է, «կրկին տեսութիւն սիրելի հայրենեաց մերոց, որոյ քաղցրութիւն, ո՜վ յայնժամ միայն զգայ մարդն, երբ յերկար ժամանակ հեռացեալ և զրկեալ գտանի ի նմանէ»։

Ամբողջ ճանապարհորդության ընթացքում, որքան էլ այն հաճելի է եղել, Աբովյանն ասում է, որ ինքը իր աշակերտների կարոտն է քաշել։

Թե ուրիշ, արդեն հայտնի նամակներից և փաստաթղթերից, թե այս ուղեգրությունից, երևում է այն բուռն և անսահման սերը, որով նա կապված է եղել իր աշակերտների հետ։

«Ոչինչ մտածմունք չեն ինձ այնքան քաղցր, այնքան սիրելի, որքան մտածմունք իմ զձէնջ։ Դուք ազնուական բարուք, առաքինի, վարուք և համեստ բնութեամբ ձերով այնպէս վառեալ ունիք զիմ սիրտ, մինչև ուր և իցեմ, զինչ և առնիցեմ, միշտ քաղցր կերպարանք ձեր, սիրելի ընկերութիւն ձեր ընդառաջ լինին ինձ և ձգեն զիս կարոտիւ առ ձեզ։ Եւ յիրաւի ո՛ր կայ, ո՛ր բարեկամութիւն կարէ լինիլ այնպէս ջերմ, այնպէս մաքուր և հաստատուն, որքան ուսուցչի և աշակերտաց։ Տեսանելով նորա զձեր անմեղ սիրտ, զձեր երեխայական մաքուր հոգին, զձեր սուրբ սէր որով ջանայք գրաւել զսիրտ ամենեցուն. կարէ՞ այնպէս անզգայ լինիլ և ոչ ջերմ արտասուօք գոհանալ զաստծոյ, որ պատրաստեալ է վասն նորա զգանձ ձեզ այսպիսի»։

Այնքան զորեղ է եղել Աբովյանի կապն իր աշակերտների հետ, որ նա ոչ միայն չի մոռացել նրանց, միշտ հիշել է, երանի տվել այն օրվան, երբ նորից կհանդիպեն իրար, այլև Էջմիածին հասնելով, երբ բոլորը ճանապարհից հոգնած քուն են մտել, Աբովյանը վանքի մի փոքրիկ խցում արթուն՝ հիշում է իր աշակերտներին, կարոտում, ներքին պահանջ զգում տեսնելու, մինչդեռ նրանց միջև, ինչպես ինքն է ասում, ահագին լեռներ ու անհուն հեռավորություն է ընկած։ «Ահա՛ այս է պատճառն, զի գրեմ ձեզ զթուղթս զայս, մասամբ խիք յայտնել ձեզ զսիրտ իմ և մասամբ պատմել ձեզ զճանապարհորդութիւն իմ»։ Աբովյանն ասում է, որ ցանկանում է աշակերտներին մասնակից դարձնել այն բոլոր վայելչություններին, որ տեսել ու զգացել է ինքը բոլոր ճանապարհորդության ժամանակ։

Աբովյանն այս ուղեգրական ակնարկը գրելիս, միաժամանակ հետապնդել է նաև մի այլ նպատակ — օգտագործել առիթը և պատմական և մանավանդ աշխարհագրական գիտելիքներ հաղորդել աշակերտներին։

Աբովյանը աշակերտներին ծանոթացնում է այն բոլոր վայրերին, որտեղից իրենք անցել են։ Նկարագրում է վայրի տեղադրությունը, կլիման, բնությունը, մարդկանց, նրանց զբաղմունքը, երբեմն պարզում, թե ինչու վայրը այսպես է կոչվում և այլն և այլն։ Այսպես օրինակ՝ «Շուլաւեր ունի զզրութիւն զարմանալի։ Յամենայն կողմանէ շրջապատեն զնա լերինք, և միմիայն դէպի հիւսիս-արևելս է բաց։ Այդիք՝ որք սփռեալ կան յերկուս ափս դետոյն, տան զամենայն տեսակ պտուղս»։ Կամ օրինակ՝ «Նահանգն Լոռուոյ այժմ անմարդաբնակ է յոյժ։ Միմիայն բանի գիւղօրայք՝ որք սփռեալ կան ի ստորոտս լերանց, պարապին խաշնարածութեամբ, վասն զի դրութիւնք տեղւոյն լեռնային գոլով, ոչ տան զօրանալ պտղոյ կամ հացի. կարկուտն վնասէ միշտ։ Գետն Ջալալօղլի բաժանէ զնա յերկուս մասունս»։

Դանի կինը, Աբովյանի ասելով, մոտը մատիտ և տետր է ունեցել։ Նույնիսկ կառքում նստած տեսածը գրանցել է տետրում, իսկ երեկոյան, երբ որևէ տեղ իջևանում էին, իսկույն գրում էր ճանապարհորդության պատմությունը։ Այնուհետև Աբովյանն ասում է՝ «Քանի՞ցս բանիցս ամօթ կալաւ զիս զի օտար կին որ ի հարցանելն զանուանս տեղեաց պահելոց մեզ. մնայի ափիբերան։ Այս խրատ լիցի մեզ, սիրելի ընկերակիցք իմ, զի ուր լիցուք. ջանադիր լիցուք քաջ նկատել և իմանալ զանուանս և զպատմութիւն անոցիկ»։

Դեռ իր դորպատյան օրագրերում Աբովյանը դիտակցել է հիշատակարան, օրագիր պահելու անհրաժեշտությունը։

«Մեր անցկացրած օրեր,— գրում է Աբովյանը,— նշանակել և նրանց համար հատուկ օրագիր սարքել չէ թե միայն նրա համար է լավ և օգտակար՝ որ մենք մեր առաջին ժամանակը վերջնի հետ կարող ենք համեմատել, մեր կենաց կարգ և սահման դնել, բախտավոր եղանին պես, մեր անցյալ ապարախտությունը միտք բերել և տհայ ավելի քաղցրությունով և շնորհակալությունով վայելել մեր կյանքը և հստակառակը պատահելիս մեզ մխիթարել և հեշտացնել, այլև էն պատճառով, որ մեր միտքը տկար գոլով, շատ բան մոռանում ա, և մենք ինչ որ մեր գլխովն անց ա կենում չենք կարող այնպես ուղիղ հիշել և դատել, ինչպես հարկն ա։ Նամանավանդ հարկավոր է, այս առնել, ինչ ժամանակ մենք օտար աշխարք ենք դուրս գալիս։ Որ ոչինչ պատճառ չունենանք դրելու, մեզ բավական նյութ են վարքը, կացությունը, կենցաղավարությունն տեղին, որ հետո մեր երկրակիցքը կարողանան լաստանք իմանալ և ինչ իրանց հավանելի ա ու օգտակար. իրանց համար ժողովել և նրանցից օրինակ առնել»։[1]

Այժմ նա կամենում է այդ գիտակցությունն աշակերտներին ներշնչել։

Այս ուղեղրությունը երևան է հանում Աբովյանի բնավորության գծերից մի-երկուսը։

Աբովյանը եղել է պարզ մարդ, և այն հայացքին, որ մարդկանց հետ ունեցած հարաբերությունների մեջ չպետք է նկատի առնել աստիճանը։ Օրինակ, նա բավականությամբ նկարագրում է, թե ինչպես բարձրաստիճան Գասնը, համահավասար մասնակցում է ծառաների և արհեստավորների աշխատանքին՝ կոտրված կառքը նորոգելիս։ «Դեղեցիկ օրինակ վասն ամենայն մարդոյ որ սնոտի աստիճանու և մեծութեամբ փքացեալ՝ յայսպիսի դիպուածս կատաղաբար վարի ընդ ամենեցուն»,— գրում է Աբովյանը։

---

[1] Աբովյանի արխիվ. № 16 ա։

Գանի վարմունքը Աբովյանին հիացրել է, որովհետև նա հաճախ է գործ ունեցել բարձրաստիճան մարդկանց հետ, բայց նման պարզ վարմունք հասարակ մարդկանց հետ՝ չի նկատել ոչ ոքի մեջ։

Մի ուրիշ օրինակ էլ պարզում է մարդկային արժանապատվության մասին Աբովյանի ունեցած ըմբռնումը։

Երևանում Գանին ներկայանում են բարձրաստիճան, բայց նրան ենթակա պաշտոնյաներ։ Աբովյանը ցավով նկարագրում է, թե ինչպես այդ պաշտոնյաներից մեկը՝ փոխգնդապետ Պրուցիկովը հազիվ էր կարողանում քերանը բանալ կամ գլուխը բարձրացնել՝ Գանի դեմքին նայելու համար։ Նրա բոլոր շարժումների մեջ Աբովյանը նկատում է ստրկահաճություն։ «Բայց ըստ իմ կարծեաց յարգել և մեծարել զնախագահս քան զմեզ ոչ նշանակէ ուրանալ զանձինն և զիսկական իւր արժանաւորութիւն, և ի ստրկութեան պարտի մարդն նախապատիւ համարել զիւր դին, քան զամենայն ինչ»։

«Եվ միթե՞ աստիճանը խլում է մարդկությունը»,— մի առիթով բացագանչել է Աբովյանը իր դորպատյան օրագրերում։

Մեծ գրողի կյանքից արդեն հայտնի մի շարք դեպքեր վկայել են, արժանապատվության այն բարձր զգացումը, որ հատուկ է եղել ընդհանրապես Աբովյանին։ Բայց այս առաջին դեպքն է, երբ նա արժանապատվության մասին ունեցած իր հասկացողությունը ձևակերպել է դրավոր։ Վերոհիշյալ երկու դեպքը Աբովյանը ոչ միայն նկարագրել է, այլև հատուկ ընդգծել, իմաստավորել։ Ըստ երևույթին նա այդ արել է դաստիարակչական նպատակով։

Բոլոր այն վայրերը, ուր մի ժամանակ պատերազմել են ռուսները պարսկական զորքերի դեմ՝ առիթ են, որ Աբովյանը վերհիշի պատերազմի դեպքերից։ Բավական է ճանապարհին հանդիպի որևէ արձան կամ արժանահիշատակ ավերակ, որպեսզի սկսի դրա պատմությունը։

Օրինակ, Լոռուն նվիրված հոդվածում հիշում է պատերազմական օրերը. «Վերջապէս Լօռի նովաւ է արժանայիշատակ՝ զի ի 1825 թուին բոլոր բնակիչք Փամբակի Բափաոեցան աստ, թողեալ զբոլոր կայս իւրեանց եկին և բնակեցան անդ։ Չի՛ թ այլ քարափ, այր, ձոր, ուր ոչ լինէին ողորմելի ընտանիք։ Ո՜վ, ես ինքնին ներկա էի և ականատես յայն ժամ՝ թէ ողորմելի ժողովուրդս այս զո՛ բրան տառապանս կրեաց։ Սովն ի միոյ կողմանէ, ցուրտն, հիւանդութիւնք ի միւսոյն, այն զի բազումք չունէին և գծածկոց կամ հանդերձ ինչ և ցամաք հացի ևս կարօտ լինելով, այն ինչ ոմանք յանձն առեալ զմահ գնային ձարել զապրուստ վասն զաւակացն իւրեանց, անողորմ Պարսիկք կամ Տաճիկք, կամ սպանանէին կամ գերի առնէին զնոսա։ Բազում անգամ առաջի աչաց մերոց յափշտակէին նոքա զանասունս, զխաշինս, այրէին զգիւղօրայս, զմարդիկս։ Սուր և շիւան պատեալ էր ամենայն ուրեք։ Դէս ժողովուրդ՝ համարեա՛ թէ աստ մեռան միմիայն ի սովոյ և ի խոնաւութենէ։ Քանի՞ ողորմելի է ազգն, որ ոչ փոյթ տանի պահպանել զանձն և զերկիր իւր»։

Կամ հենց որ մտնում է Սարդարի ամրոցը, անմիջապես հիշում է հայերի ստրկական վիճակը պարսիկների տիրապետության օրով։ «Եւ զարդիս իսկ ի մտանելն աստ սարսափ հարկանէ զքեզ՝ թուի քեզ՝ թէ այժմ իսկ կանգնեալ տեսանէ առաջի քո կախաղան սոսկատեսիլ։ և անգութ արբանեակք սարդարի արկանեն ի քեզ զդէմս ծարաւի արեան։ Թուի քեզ տակաւին լսել զպիտղորմ ազազակ անպարտ քրիստոնէից, յորոց բազումք կենդանւոյն ածեալ աստ, այլ ոչ կարացին միւս անգամ դառնալ առ իրսն»։

Կամ օրինակ՝ Աբովյանն ասում է, որ Ալեքսանդրոպոլից ինը վերստ հեռավորության վրա է գտնվում Խրլ-Ղարաքիլիսա գյուղը, ուր տները ավելի հողակույտերի են նման, քան մարդկային բնակության։ Եվ անմիջապես ավելացնում է, թե գուցե ընթերցողները զարմանան, որ ինքը տալիս է այդ անշան գյուղի անունը, բայց լավ կլինի, որ պատճառն իմանան։ Արդեն առիթ կա։ Եվ Աբովյանը պատմում է, թե ինչպես 1825-ին Երևանի արյունարբու կուսակալ Հասան-խանը՝ իր անողորմ դառնության թույնը թափեց հայ ժողովրդի վրա։ Նա պատմում է հայ գյուղացիների անհնար քաջագործությունների մասին։ «Զի ևս սկսեալ պատերազմին պարսից, նա (այսինքն՝ Հասան-խանը) եկեալ էր յամառն յԱպարան հանդերձ զօրօք իւրովք, նա մտադրեալ դոլով աւերել գիւղս զայս, սպասէր յաջող ժամանակի։ Հայազգի երևանցիք յայտնեալ էին Խլղարաքիլիսի բնակչաց զգուշանալ՝ և սոքա հաւաքեալ զբոլոր կայս իւրեանց, զինեալ էին ի սայլից զբերդ մի առաջի գեղջն, առ ի պահպանել զանձինս իւրեանց։ Յառաւօտու միում նախ քան զծագել արեգական, զօրքն Թշնամեաց յարձակին, այլ Հայք անհնարին քաջութեամբ պատերազմին ընդ նոսա և ժամս չորս Թշնամիք ոչ համարձակին ձեռնամուխ լինիլ ի նոսա։ Յայսմ միջոցի դունդ մի զօրաց դայ ի Գիւմրէ յօգնութիւն նոցա։ Հայք ժողովին առ նոսա բոլոր ընտանեօք իւրեանց, բայց զօրապետն խաբեալ ի Տաճկայ յանկարծ վերադառնայ։ Ո՜հ, ով կարէ պատմել զողորմելեաց զվիճակ։ Արք և կանայք, աղջիկք և մանկունք մնան անօգնական ի դաշտին։ Պարսիկք սրախողող արարեալ զբոլոր ծերունիս, այրեալ զամենայն տունս, աւար առեալ զամենայն կայս և զդեռահասակսն զամենայն թուով իբրև 200 վարեն ի գերութիւն։ Զբազում ծնողս առաջի որդւոց իւրեանց, զբազում մանկտնս առաջի ծնողաց իւրեանց մատնին ի սուր սուսերի։ Մակաւք փախչին և ապրեցուցանեն զանձինս իւրեանց, մոռայեալ զծնողս, զորդիս և զընտանիս։ Գալարին աղիք ի լսելն զաղէտապատում վիճակ ողորմելեացս այսոցիկ»։

Եվ այս ամբողջ պատմությունը Աբովյանը սառը և հանգիստ չի անում, այլ կրքով, տրամադրված, այնպես, որ հայրենասիրություն բորբոքի աշակերտների մեջ։ Անտարբեր չի կարելի կարդալ այս նկարագրության մեջ, թե ինչպես պարսիկները սրախողող անելով բոլոր ծերունիներին, այրելով բոլոր տները, ավերելով ամբողջ գյուղը, դեռահաս աղջիկներին դերի վերցնելով, ծնողներին որդիների առաջ, երեխաներին ծնողների առաջ սրի են քաշում։

Այս ուղեգրական ակնարկը գրվել է այն ժամանակները, երբ Աբովյանը ոչ միայն միտք էր հղացել գրել «Վերք Հայաստանի» վեպը, այլև որոշ հատվածներ արդեն գրել էր, նույնիսկ կարդացել աշակերտների մոտ։ Եվ այս ուղեգրությունը ցույց է տալիս, թե ինչպես շատ բան, որ գիտցել է կամ իր սեփական աչքով տեսել Աբովյանը այս շրջագայության ժամանակ՝ զանազան առիթներով վերհիշել է, մտաբերել, թարմացրել։ Եվ սրա մեջ եղած առանձին հատվածները ոչ այլ ինչ են, բայց եթե այն հում նյութը, որի հիման վրա հետագայում Աբովյանը գրել է իր վեպի մի շարք էջեր։

Ուղեգրական ակնարկի մեջ որոշ մանրամասնություններ կան, որոնց մի մասը վերաբերում է «Վերքում» նկարագրված ժամանակաշրջանին, մի մասն էլ այն տարվան, երբ Աբովյանը Գանի հետ ճանապարհորդել է Հայաստանում։ Աբովյանի պատմածի մեջ շատ բնորոշ է և մեր պատմության համար հետաքրքրական մի փաստ. բայազետցիները տերության հարկապահանջության դեմ ապստամբություն են բարձրացրել և դրա համար բանտ նետվել։

Այս շատ կարևոր պատմական դեպք է, որի վրա Աբովյանը, դժբախտաբար, հարկ չի համարել այստեղ հանգամանորեն կանգ առնելու։

Թյուրքիայից (ինչպես և Պարսկաստանից) գաղթած հայերը կառավարության տված արտոնությամբ վեց տարի հարկ չէին տալու։ Երբ ժամկետը լրանում է և կառավարությունը վերաբնակիչներին հարկատվության է ենթարկում, բայազետցիները կառավարությանը խնդրում են սկզբում պակասեցնել հարկերը, իսկ հետո հրաժարվում են բոլորովին տալ։ Կառավարությունը միջոցներ է ձեռք առնում ապստամբ գյուղացիներին հնազանդեցնելու։ Ժողովրդական հուզմունքն աճում է, ընդգրկում լայն ծավալ։ Բայազետցիների օրինակով իրենց ձայնն են բարձրացնում նաև Երևանի արհեստավորները և նույն գավառի գյուղացիությունը։ Կառավարությունը դիմում է զենքի օգնության։ Կալանավորում են շարժման պարագլուխներին, ճնշում գյուղացիությանը։

Պետք է պրպտումները շարունակել, նոր փաստաթղթեր գտնել և պարզել, թե ինչպես է ընկալել և ընդհանրապես վերաբերվել այս դեպքերին Աբովյանը։

Աբովյանն ասում է, որ Գյոքչայի բնակիչները, անսովոր լինելով տեղի բնությանը, վերջին չքավորության մեջ են ընկել։ Ի դեպ Աբովյանը նույնն է ասում նաև Ջիբուխլուի գյուղացիության մասին — թափուր ամեն տեսակ վայելչությունից և դառը եղանակի պատճառով հացի անգամ կարոտ են։

Նկատենք, որ մի քանի տեղ, պարսկական բռնակալության մասին խոսելիս, Աբովյանը երախտագիտությամբ հիշում է Հայաստանը փրկող ռուսներին։

Այս փաստաթուղթը հետաքրքրական է նաև մի այլ տեսակետով։

Սրա մեջ մեր բանասերները կգտնեն Գանի գրույցը էջմիածնի միաբանության հետ, որ համառոտ բերում է իր ուղեգրության մեջ Աբովյանը։

... «Հոգևորականք մեր յայսմհետէ ստանայիք լիցին պարապիլ ուսմամբք և նոքիմբք պայծառացուցանել նախ զանձն իւրեանց ապա յուսաւորել զազգն։ Յայնմհետէ այլ ոչ ճնշեսցի (իրաւի աթոռն ի ներքոյ ծանր լծոյ բարբարոսաց։ Յայնմհետէ ՚ի բարօրութեան բարդաւաճեսցին ազգն և հոգևորականք նորա, բայց այս իսկ ազատութիւն և ապահովութիւն աւելի ևս վտանգաւոր իցէ հոգևորականաց, քան բռնակալութիւն Պարսից։ Ձեր՝ ասէ, մինչև ցարդ թշնամի ոխերիմ Մահմետականութեան ակն յանդիման կայր առաջի՝ որ Երենյի ցոլով ստիպէր զձեզ կալ միշտ ի պատրաստի։ Նովաւ արդարացուցանէիք և մինչև ցարդ զանձինս ձեր առաջի ազգին, զի բարբարոսութիւն ոչ տայր ձեզ թոյլ պարապիլ գիտութեամբք, բայց այժմ այլ թշնամի ի դարանի կայ ձեր ընդդէմ. թշնամի աներևոյթ և նորին, որ յանկասկած գալն՝ յարէ զենս իւր և մահացուցանէ զընդդիմակալսն՝ ա՛յն է լուսաւորութիւն, որ բանալով պաշս ժողովրդական, այլ ոչ ներեսցէ նմա, կուրակուրայն հետևել բանից և ասութեանց հոգևոր ուսուցչաց, զորս ինքեանք նախ՝ քաջ պարտին կշռադատել և ճանաչել և ապա հաղորդել նմա։ Ժողովուրդն կամ ենթադրեալ որ առ հասարակ՝ զգացեալ զտկարութիւն և զանգիտութիւն վերակացուի իւրոյ կամ գլխաւորի և զիւրն կատարելութիւն, ոչ կարէ ի սրտէ պատուել և յարգել զնա, այլ ի ծածուկս

[1] Պատմական այս դեպքերի մասին տես՝ Վ. Ռշտունու «Крестьянская реформа в Армении в 1870 г.» խորագրով աշխատությունը. 1947 թ., էջ 7։

և առ երեսս, յայս սազս ոչինչ միջոց մնայ ձեզ այժմ գրաւել զսիրտս ձեզն յանձն եղեալ հաւատացելոց և ազգի՝ եթէ ո՛չ կրթութեամբ և լուսաւորութեամբ: Սոքոք միայն կարելի է ձեզ իշխել և վարիլ զիշխանութիւն ձեր համաձայն կոչման և աստիճանի ձերում: Ես ինքն ի Կոստանդինուպօլիս և յայլ տեղիս բաւական տեսեալ և ծանուցեալ եմ զազգն ձեր, և ամենայն ուրեք աշխարհականք աւելի ևս ցուցանեն զսէր և զջանադրութիւն առ ուսմունս, քան հոգևորականք, որ ընդհակառակն պարտ էր լինել»:

Գանի զրույցի մեջ ուշագրավ է մի կետ, որը կարևորելով՝ Աբովյանը առանձնապես շեշտել է: Նույն այդ հայացքը, ճիշտ է, տարբեր գունավորումով և մի այլ կապակցությամբ՝ գտնում ենք Աբովյանի հետագա գրվածքների մեջ:

Ինչի՞ մասին է խոսքը:

Ժողովրդի մեջ լուսավորությունը տարածվում է: Դրա համեմատ էլ նրա պահանջները ոչ միայն փոխվում, այլև բարձրանում են: Իսկ հոգևորականության մեջ, ասում է Գանը, նկատելի չէ լուսավորության ձգտում: Հոգևորականությունը մնում է նույն աստիճանին, առաջ չի գնում: Այսպիսով, եզրակացնում է Գանը, հակասություն առաջ կգա ժողովրդի և հոգևորականության միջև: Եվ հոգևորականությունը աստիճանաբար կկորցնի իր հեղինակությունը և ընդհանրապես ժողովրդի հոգևոր կյանքը ղեկավարելու նկատմամբ իր ունեցած իրավունքը:

Աբովյանին և Գանին այս նույն հարցը զբաղեցրել է տարբեր տեսակետից: Աբովյանը վեճի մեջ չի մանում Գանի հետ, բայց նրան նույնպես ցավ է պատճառում, որ հոգևորականությունը հանդես չի բերում անհրաժեշտ ջերմեռանդություն ժողովրդի լուսավորության գործում: Այդ հարցը Գանին զբաղեցրել է որպես իշխանության ներկայացուցչի: Հոգևորականությունը Գանի համար այն զորեղ ձեռքն է, որի միջոցով կառավարությունը պետք է ժողովրդին ազդել կարողանա: Գանին մտահոգում է այն հարցը, որ լուսավորությունը ժողովրդի աչքերը բանալով, այլևս չի թույլ տա նրան՝ կույր կերպով հետևել հոգևոր ուսուցիչների խոսքին: Նրան շատ ավելի զբաղեցնում, անհանգստացնում է այն, որ հոգևորականությունը կորցնում է իր իշխելու իրավունքը. «յայս սակս ոչինչ միջոց մնա ձեզ այժմ գրաւել զսիրտ ձեզն յանձն եղեալ հաւատացելոց և ազգի՝ եթէ ո՛չ կրթութեամբ և լուսաւորութեամբ»:

Աբովյանին հարցը զբաղեցնում է ժողովրդի լուսավորության, իսկ Գանին՝ կառավարության շահերի տեսակետից:[1]

Այս փաստաթղթում Աբովյանը, ճիշտ է, ի միջի այլոց, բայց առաջ է քաշել մի կարևոր խնդիր: Լոռուն նվիրված գլխում Աբովյանն այն միտքն է հայտնում, որ երկրագործության մեջ պետք է մարդը փնտրի իր փրկությունը: ... «Արդար երկրագործութիւն կարէ հաստատել զմարդն անհնարին հարստութեան, բախտաւորութեան, եթէ միմիայն մարդն կամեսցի պարապիլ նովաւ»:[2]

[1] Գանի այս զրույցը Աբովյանը բերել է մոտ տասը տարի հետո «Кавказ» լրագրի համար գրված, բայց չհրապարակված մի հոդվածաշարքից: Երկու տեքստերի մեջ որոշ տարբերություն կա:

[2] Աբովյանի այս միտքը մենք բերում ենք ոչ ամբողջությամբ. Նախադասության սկիզբը Աբովյանի ձեռագրում չի կարդացվում թղթի պատռվածքի պատճառով: Նախադասությունը սկսվում է այսպես. «Ոչ կույր բախ... չութեան, այլ և» շարունակությունը այնպես, ինչպես բերված է: Չկարդացվող բառը կամ գուցե բառերը առանձնապես կարևոր են, որովհետև Աբովյանը դրան է հակադրել երկրագործությունը:

Այս ըմբռնումը Աբովյանի աշխարհայացքի անկյունաքարերից մեկն է։ Այս միտքը իր հետագա խորացումն է գտել Աբովյանի ուրիշ գրվածքներում, ինչպես և «Վերքի» մեջ։ Նույնը կարելի է ասել նաև զրույցների մասին։

Այս փաստաթղթում ասվածը կարևոր է հատկապես այն տեսակետից, որ վերոհիշյալ հարցի մասին դա նրա վաղ ասույթներից է։

Իսկ այն միտքը, թե «շինականք Հայոց աշխատասէրք են. միմիայն ոչ գիտեն զկերպ աշխատութեան», ցույց է տալիս, որ Աբովյանին շատ է զբաղեցրել այն հարցը, թե ինչպիսին պետք է լինի երկրագործությունը, ինչ առաջավոր և կուլտուրական ձևեր պետք է ընդունի այն։ Եվ թերևս ոչ մի տեղ Աբովյանը այնքան պարզ և ծրագրային ձևով չի շարադրել իր պատկերացումը, թե որպիսին պետք է լինի գյուղը և ինչ հիմքերի վրա դրված գյուղատնտեսությունը, ինչպես «Պատմութիւն Տիգրանի» գրվածքում։[1]

[1] Աբովյան—«Ընտիր երկեր», հ. 2-րդ, 1940, էջ 175—295։